

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիա**

ՈՐՈՇՈՒՄ

17 սեպտեմբերի 2014 թվականի

թիվ 12/9

քաղ. Մինսկ

**Մաքսային միության տարածքով ապրանքների տարանցիկ փոխադրման
ժամանակ երաշխիքային մեխանիզմների զարգացման մասին**

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Սահմանել Մաքսային միության տարածքով ապրանքների տարանցիկ
փոխադրման ժամանակ երաշխիքային մեխանիզմներ զարգացնելու գծով՝
Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
միավորված կոլեգիային առընթեր աշխատանքային խմբի կազմը (հավելված թիվ
1):

2. Տարանցիկ փոխադրման մաքսային ընթացակարգը կիրառելիս հիմք
ընդունել մաքսային մարմինների եւ երաշխավորողների փոխգործակցության
մեխանիզմի հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) (հավելված թիվ 2):

3. Որոշման 1-ին կետում նշված աշխատանքային խմբին՝

հաշվի առնել Հայեցակարգի դրույթները՝ Մաքսային միության տարածքով
ապրանքների տարանցիկ փոխադրման ժամանակ մաքսատուրքերի, հարկերի
վճարման ապահովման միասնական համակարգի ստեղծման եւ զարգացման
վերաբերյալ առաջարկներ նախապատրաստելիս.

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների հերթական նիստին զեկուցել Մաքսային միության տարածքով ապրանքների տարանցիկ փոխադրման ժամանակ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման միասնական համակարգի ձեւավորման ընթացքի մասին:

Նախագահ՝

Ա. Յու. Բեյլանինով

Նախագահի տեղակալ՝

Ա. Ֆ. Շպիլեւսկի

Նախագահի տեղակալ՝

Գ. Կ. Ամրին

Հավելված թիվ 1

Մաքսային միության անդամ պետությունների
մաքսային ծառայությունների միավորված
կոլեգիայի թիվ 12/9 որոշման

**Մաքսային միության տարածքով ապրանքների տարանցիկ փոխադրման
ժամանակ երաշխիքային մեխանիզմներ զարգացնելու եւ կիրառելու գծով՝
Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
միավորված կոլեգիային առընթեր աշխատանքային խմբի կազմը**

Կոմարովա Օլգա Նիկոլայի	- Ռուսաստանի ԴՄԾ-ի Դաշնային մաքսային եկամուտների եւ սակագնային կարգավորման գլխավոր վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար
Վալիեւ Ալեքսանդր Անատոլիի	- Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի Սակագնային կարգավորման եւ մաքսային վճարների վարչության պետ՝ Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ
Մաուբաեւ Կայրատ Ուրգենիշբայի	- Ղազախստանի Հանրապետության ֆինանսների Նախարարության ՄՀԿ-ի Հեռավար դիտանցման վարչության ղեկավար՝ աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ
Յակովլեւ Վադիմ Յուրիի	Բելառուսի Հանրապետության մաքսային ծառայությունից - Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի Սակագնային կարգավորման եւ մաքսային վճարների վարչության պետի տեղակալ
Պլանին Անդրեյ Ալեքսանդրի	- Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի Մաքսային հսկողության կազմակերպման վարչության պետի տեղակալ
Ջոտով Վյաչեսլավ Գեննադիի	- Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների, մաքսային վիճակագրության եւ վերլուծության վարչության պետի տեղակալ
Արտեմեւ Ալեքսեյ Ալեքսեյի	- Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի Մաքսային միության հարցերով իրավական վարչության պետի տեղակալ
Դրոզդ Լյուդմիլա Վլադիմիրի	- Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի

Բոնդիկովա Անաստասիա Պյոտրի	Սակագնային կարգավորման եւ մաքսային վճարների վարչության Մաքսային վճարների գանձման մեթոդաբանության բաժնի պետ - Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի Մաքսային հսկողության կազմակերպման վարչության Մաքսային հսկողության ներքո փոխադրման կազմակերպման բաժնի գլխավոր տեսուչ
Ղազախստանի Հանրապետության մաքսային ծառայությունից Խոջաբերգենովա Բագիրա Ջուդանի	- Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի Մաքսային եկամուտների վարչության գլխավոր փորձագետ
Մեդետբեկ Վեներա Կերիմբեկի	- Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների արդիականացման վարչության գլխավոր փորձագետ
Ասիլբեկովա Միրա Տոկտարբեկի	- Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի Հեռավար դիտանցման վարչության փորձագետ
Ռուսաստանի Դաշնության մաքսային ծառայությունից	- Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի Իրավական վարչության պետ
Չերկեսովա Լարիսա Իվանի	- Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի Մաքսային ձեւակերպման եւ մաքսային հսկողության կազմակերպման գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ
Ամելյանովիչ Սերգեյ Ալեքսեյի	- Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի Իրավական վարչության պետի առաջին տեղակալ
Ջարեմբո Սերգեյ Ալեքսանդրի	- Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի Իրավական վարչության պետի առաջին տեղակալ
Սեմաշկո Սերգեյ Ալեքսանդրի	- Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի Դաշնային մաքսային եկամուտների եւ սակագնային կարգավորման գլխավոր վարչության պետի տեղակալ
Ռոմանով Կիրիլ Օլեգի	- Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի Տեխնոլոգիաների գլխավոր վարչության Տեղեկատվական անվտանգության ծառայության Տեղեկատվական անվտանգության եւ տեղեկատվության տեխնիկական պաշտպանության բաժնի պետ
Դեմիդով Իգոր Ստեփանի	- Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի Կենտրոնական տեղեկատվատեխնիկական մաքսային վարչության Նախնական գործառնությունների, մաքսային տարանցիկ

Կարելայա Մարինա Վլադիմիրի	փոխադրման եւ տեղեկատվական փոխգործակցության ծրագրային միջոցների զարգացման բաժնի պետ
Բուբելո Միխայիլ Վալերիի	Ռուսաստանի ԴՄԾ-ի Իրավական վարչության մաքսային գործի ոլորտում իրավական վերլուծության բաժնի պետ
Կուխտով Կոնստանտին Յուրիի	- Ռուսաստանի ԴՄԾ-ի Մաքսային ձեւակերպումների եւ մաքսային հսկողության կազմակերպման գլխավոր վարչության Տարանցիկ փոխադրման միասնական համակարգի մեթոդաբանության եւ գործունեության կազմակերպման բաժնի պետի տեղակալ
Տոլկաչեւ Իգոր Վասիլիի	- Ռուսաստանի ԴՄԾ-ի Մաքսային ձեւակերպումների եւ մաքսային հսկողության կազմակերպման գլխավոր վարչության Տարանցիկ փոխադրման միասնական համակարգի մեթոդաբանության եւ գործունեության կազմակերպման բաժնի պետի տեղակալ
Ֆոմին Ալեքսանդր Սերգեյի	- Ռուսաստանի ԴՄԾ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների գլխավոր վարչության Մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի տեղակալ
Բրաժնիկով Միխայիլ Յուրիի	- Ռուսաստանի ԴՄԾ-ի Դաշնային մաքսային եկամուտների եւ սակագնային կարգավորման գլխավոր վարչության Մաքսային վճարների եւ պարտքի գանձման ապահովման վարչարարության բաժնի պետի տեղակալ
Մաչինա Օկսանա Իվանի	- Ռուսաստանի ԴՄԾ-ի Մաքսային համագործակցության վարչության Մաքսային միության գործունեության ապահովման բաժնի գլխավոր պետական մաքսային տեսուչ
Տարասով Վալերի Գեորգիի	- Ռուսաստանի ԴՄԾ-ի Իրավական վարչության մաքսային գործի ոլորտում իրավական վերլուծության բաժնի առաջատար խորհրդատու
	- Ռուսաստանի ԴՄԾ-ի Կենտրոնական տեղեկատվատեխնիկական մաքսային վարչության Մաքսային մարմինների ՄԱՏՀ ԿՏԲ-ի տեղեկատվության մշակման եւ

վերլուծության բաժնի առաջատար ինժեներ

Հավելված թիվ 2

Մաքսային միության անդամ պետությունների
մաքսային ծառայությունների միավորված
կոլեգիայի թիվ 12/9 որոշման

Հայեցակարգ

տարանցիկ փոխադրման մաքսային ընթացակարգը կիրառելիս մաքսային մարմինների եւ երաշխավորողների փոխգործակցության մեխանիզմի

Մաքսային միության անդամ պետությունների միասնական մաքսային տարածքը պահանջում է ոչ միայն մաքսային կարգավորման սկզբունքների միասնականացում, այլեւ արտահանման-ներմուծման նյութական հոսքերը կառավարելիս մաքսային ֆորմալ պահանջների կատարման մասով լոգիստիկ խնդիրների լուծում:

Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փոխադրման պայմանների կատարումը կարգավորելու գլխավոր տարրերից մեկը մաքսային մարմիններին մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումն է:

Մաքսային վարչարարության տեսանկյունից մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելիս հիմնական պահանջներն են՝

անվտանգությունը.

հուսալիությունը.

թափանցիկությունը.

իրացվելիությունը.

վարչարարության պարզությունը.

ապահովումն ընդունելու եւ դրա օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու ժամանակ նվազագույն ծախսումները:

Լոգիստիկայի տեսանկյունից ապահովման կիրառումը պետք է համապատասխանի հետեւյալ չափանիշներին՝

անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպման նվազագույն ժամանակ.

Մաքսային միության անդամ պետությունների տարածքով փոխադրումներ իրականացնելիս ապահովման ներդրումը հավաստող միասնական փաստաթղթի կիրառում.

«մեկ կանգառ» (Մաքսային միության արտաքին սահմաններում) եւ «տարանցման անընդհատություն» սկզբունքների իրագործում.

Օպտիմալ ֆինանսական ծախսումներ փոխադրողի համար.

Ռուսաստանի Դաշնության ՄՃՓ կոնվենցիայի կիրառման փորձը, որի շրջանակներում նաեւ իրականացվում են ապրանքների փոխադրումներ, վկայում է միջազգային երաշխիքային միավորման կողմից պետության համար հուսալի ֆինանսական երաշխիքի բացակայության մասին, որի արդյունքը մաքսային վճարների վճարման գծով պարտքի զգալի գումարն է:

Այս առումով պետք է ստեղծվի Մաքսային միության տարածքով ապրանքների տարանցիկ փոխադրման ժամանակ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման միասնական համակարգ (այսուհետ՝ երաշխիքային համակարգ), որը բացառում է մաքսային վճարների՝ Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ չվճարման ռիսկերը:

Նման համակարգ ստեղծելու համար որպես հիմք կարող է ընդունվել Բելառուսի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ակտիվորեն կիրառվող երաշխավորությունը՝ որպես մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման եղանակ:

Չնայած երաշխավորության օգտագործման տեխնոլոգիաներում առկա

որոշակի տարբերություններին, դրա կիրառման հիմնական սկզբունքը երաշխավորողների պարտավորությունների կատարման ֆինանսական ապահովման տրամադրումն է մաքսային մարմինին:

Նման մոտեցումը իրագործելու համար պետք է կազմակերպվի տարանցիկ փոխադրման մաքսային ընթացակարգը կիրառելիս մաքսային մարմինների եւ երաշխավորողների փոխգործակցությունը, ինչպես նաեւ միմյանց միջեւ երաշխավորողների փոխգործակցությունը:

Ներկայումս կազմակերպվել է Մաքսային միության անդամ պետությունների միջեւ փոխգործակցություն, այդ թվում՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը կիրառելու մասով: Բելառուսի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում նույնպես առկա է տվյալ պետության մաքսային մարմինների եւ երաշխավորողների միջեւ փոխգործակցության փորձ, սակայն երաշխավորողների միջեւ փոխգործակցության փորձը բացակայում է:

Այդ պատճառով կանոնավոր կերպով Մաքսային միության տարածքով ապրանքներ փոխադրող միեւնույն փոխադրողների նկատմամբ տարբեր երաշխավորողներ կարող են կիրառել երաշխավորություն տրամադրելու գծով մատուցվող ծառայությունների արժեքի վրա ազդող ռիսկերի գնահատման տարբեր չափանիշներ:

Երաշխիքային համակարգերի կառուցումը պետք է իրականացվի մի քանի փուլով (սկզբնական փուլ, միջանկյալ փուլ, ավարտական փուլ) եւ հիմնվի հետեւյալ սկզբունքների վրա՝

1) համակարգի՝ որպես մեկ ամբողջության եւ դրա յուրաքանչյուր անդամի համար առանձին կայունության ապահովումը.

2) վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների անվերապահ մարման հնարավորությունը՝ տարանցիկ փոխադրման մաքսային ընթացակարգի խախտման դեպքում.

3) երաշխիքային համակարգի համալիր մրցունակությունն՝ ապահովման

այլընտրանքային եղանակների եւ երաշխիքային համակարգերի նկատմամբ.

4) փոխադրողների գործունեության վերլուծության հիման վրա մաքսային օրենսդրության խախտման առաջացման ռիսկը նվազագույնի հասցնելը նախատեսող համակարգի կիրառում.

5) տարանցման միասնական փաստաթղթի, ինչպես նաեւ Մաքսային միության տարբեր անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ փոխադրումներ իրականացնելիս մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրումը հավաստող փաստաթղթի կիրառումը:

Երաշխիքային համակարգերի կառուցումը ենթադրում է ապրանքների տարանցիկ փոխադրման ժամանակ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների առջեւ որպես երաշխավորող հանդես եկող անձանց կողմից վերազգային կազմակերպության ստեղծում:

Վերազգային կազմակերպությունը կարող է ստեղծվել որպես երաշխավորողների կամավոր միավորում (երաշխավորողների միություն)՝ համապատասխան համաձայնագրի հիման վրա:

Վերազգային կազմակերպության ստեղծման եւ գործունեության նպատակն է երաշխիքի ձեւով մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը տրամադրելուն ուղղված երաշխավորողների համատեղ գործունեությունը՝ ըստ միասնականացված կանոնների եւ սակագների: Դա հնարավորություն կտա ապահովել ֆինանսական ռիսկի հետ կապված ծառայությունների մատուցման ֆինանսական կայունությունը՝ տվյալ կազմակերպության եւ (կամ) դրա կողմից ստեղծված կամ լիազորված կազմակերպության անունից կնքված երաշխավորության պայմանագրով պարտավորությունների կատարման նկատմամբ համապարտ պատասխանատվության պայմաններով:

Երաշխիքային համակարգեր ստեղծելիս անհրաժեշտ է սահմանել երաշխիքային համակարգերի բոլոր մասնակիցների փոխգործակցության հստակ կարգը, որը կթույլատրի նվազագույնի հասցնել Մաքսային միության անդամ

պետությունների համար ռիսկերը եւ ընդլայնել ապրանքների տարանցիկ փոխադրման ժամանակ երաշխավորության օգտագործման հնարավորությունները:

Փոխգործակցության համապատասխան կարգը պետք է հիմնվի հետեւյալ սկզբունքների վրա՝

1. Երաշխավորությունը Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմին (հաշվի առնելով երաշխավորողի ռեզիդենտությունը) է տրամադրվում փոխադրողների փոխարեն՝ հաշվի առնելով օրենսդրության չկատարման համար անցկացվող ռիսկերի գնահատումը: Ընդ որում, երաշխավորողները կարող են փոխադրողների ազգային եւ օտարերկրյա ասոցիացիաներից, բեռնառաքողներից եւ ապրանքներն արտադրողներից նրանց հետ կնքված համաձայնագրերի հիման վրա փոխադրողների փոխարեն ստանալ երաշխիքներ, ինչպես նաեւ տեղեկություններ նրանց ֆինանսական դրության մասին:

2. Վերազգային երաշխիքային կազմակերպության շրջանակներում գործող երաշխավորողները՝ իրենց ծառայությունների արժեքի ձեւավորման նպատակով, օգտագործում են այն անձանց տվյալները, որոնք ապրանքների տարանցիկ փոխադրման ժամանակ ունեցել են խախտում կամ որոնց ֆինանսական դրությունը մտահոգության տեղիք է տալիս:

3. Ոչ թղթային (էլեկտրոնային) տեխնոլոգիաների գերակայությունը:

4. Մաքսային մարմինների հետ երաշխավորողների փոխգործակցությունն ապահովող ծրագրային ապահովման առկայությունը:

Առաջարկված մեխանիզմը թույլ կտա բարձրացնել երաշխավորողների կողմից մատուցվող ծառայությունների հուսալիությունը, կայունությունը, հասանելիությունն ու մրցունակությունը այլ երաշխիքային մեխանիզմների համեմատ, այդ թվում՝ այն միջազգային համաձայնագրերի շրջանակներում կիրառվող երաշխիքային մեխանիզմների, որոնց մասնակիցներն են Բելառուսի

Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունն ու Ռուսաստանի
Դաշնությունը: